

ԿԱՅԻՌԱ ԳՐԱԿՐՈՍ

ՈՂ. ԲԵՐԳՈՒԹԻՒՆ Վ. ԽՆԿԵՆՏԻ ՄՈՆՏԵՍ 0. 0

ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԻ ՈՂ. ԲԵՐԳՈՒԹԵԱՆ



նաշխարհիկ ուղղութեամբք
պերճացելոյ ազգին Հռով-
մայեցւոց առ տակաւ տա-
կաւ յընթացս ժամանակաց
՚ի նախկին խսութենէ բարո-
յիցն վերջանեալ քաջայաց իի-
նել գիտեմք առ բանտուէրս , և
թէ որպէս Հռովմայ միանդամ տարա-
ծեալ ձգեալ զրազուկ հօգոր իշխանու-
թեանն ՚ի Յունաստան և յլիսիա , և ՚ի
հաղորդութիւն եկեալ վարուց և բա-
րուց մեզւացելց աշխարհացն այնոցիկ ,
կորոյս առ տակաւ տակաւ զգերա-
պանձն այն հառվմէտկան դրոշմն լա-
ւութեան , որով նեթ զարգացեալն էր
ցայն վայր ժամանակի : Աչ ճոխութիւնք
եեթ և գրգանաց հաճոք ասիտկանք և
յունականք , այլ զոյդ ընդ նոսին , նա
մանաւանդ գրգուի նոցին յառաւելա-
գոյն աճումն՝ լեալ էին վարդապետու-
թիւնք բիւրակերպիք իմաստափրաց ,
խոռն ընդ ճամարտակ նրբարանու-
թեանց աւուր աւուր ՚ի վեր երեւելոց
՚ի Հռովմ և յիտալիա համօրէն : Եպի-
կուր , կարնէադ , Լուկրետիոս , Մետարո-
դոր և այլք բազումք համախոնք ոտցին ,
յորոց բազմաթիւք զեղծեալ բարուք և
բանիք , մեկեալ ձգեցին զՀռովմ՝ ՚ի գա-
հավէժ անգը անբարյականութեան ,
յոր իմաստամիրս թիւն և կընք , մորդ
և աստուած՝ նիւթա ապաշտութեան կըն-
քեալ գրոշմի՝ նշաւակ կացին ՚ի ձե-
ռըս ամենավոր բախտին , յոր ապաս-
տան առնէին ինքնին և զկատարած

Հռովմայ և զիտալիոյ : — Զանալ ջա-
նացին արդարեւ արդարակորովք ոմանք
՚ի վեր երեւելք ըստ բուսոյ բարուց
նախկին Հռովմայեցւոց , որպէս կատոն ,
Սկիպիոն Եմիլիանոս և Գրակեանք ,
զառաջն ունել թաթաղուն զեղուն ա-
պականութեանն , որ յամենուստ յոր-
դեալ գիզաղէզ՝ սպաւնայր զմբրա-
հաս կորուստ հառվմէական իշխանու-
թեան . այլ օրինակ և փոյթ խնամոց
ասկաւուցն այնոցիկ չնոչխարհիկ որե-
րոյ՝ անպատուզք ամենեաին եղեն ՚ի բա-
րեգործել . մանաւանդ զի ոչ գտան
միարանք յընորութիւն եղանակի , ո-
րով էր նոցա ՚ի հանգէս ուղղութեանց
առաջնորդ ել ժողովրդեան : Այսպէս ա-
պա մինչդեռ համարական կատան խըս-
տութեամբ իւրով զժպէի մանաւանդ
քան սիրելի լինծայցուցանէր զառա-
քինութիւն առ բնաւս , Սկիպիոն մերթ
զդիւրափափոխ ռամին ձկամունս շո-
զոմելով , և մերթ զրոնացելոյ ծերա-
կուախն ջանայր անդիքիւնն ունել ըզ-
մէտ հաւասար կշոյ զօրութեան նո-
ցին . իսկ Գրակեանք ընդհակուսակին
և սրաիւ և բանիւ . և գործով ՚ի մահ
զանձինու ետուն առ ՚ի պաշտպան իի-
նել ընկներոյ ամբոխին ՚ի հարատահա-
րութենէ բռնացելց գասուն պատրը-
կաց :

Զհոյտհապ արանցս , զորոց ոչ սա-
կաւ բանք լինին յառաջիկայ յոզբեր-
գութեանս պատշաճ վարկանիմ սուղ-
ինչ ընդարձակ զեկուցանել աստ ՚ի

սկզբան զբարուց և զընթացից քաղաքավարութեանն, առ ՚ի բացայայտ պարզել՝ ՚ի միտս ընթերցանելեաց զոդի և զնպատակ քերթողին, որոյ յօրինեալ է զոռաչիկայս՝ իրբ բողոք իմա ազգու՝ ՚ի բերանոյ ընկճելց հայրենակցացն՝ ընդ լծով բռնութեան օտարաց և բնիկ հարստահարողացն յիտափիա:

Կատոն ՚ի մահու իւրում ետես զապականութիւնն, զորոյ զառաջն ունել գուն գործեալ էր՝ մինչդեռ կենդանին էր, ողողել զեղուղ ընդ բովանդակ իւտալիա. այլ ետես խնդութեամբ և զյաջորդ իւր ՚ի հանդէս առաքինութեանց՝ առ ՚ի յառաջ վարել զսկսեալն իւր գործ, զլիկիպիոն նմիիանոս: — Այրապատ որդի էր լաւագունին՝ ՚ի Հռովմայեցիս՝ Պաւլոսի կմիլեայ, անընշասէր յաղթականին Մակեղոնիոյ, յորդեգիրս ընկալեալ ՚ի յաղթական ախոյենէն Ըննիքաղայ առ Զամայիւ: Թէպէտ և սերեալ յաջնուական տոհմէ էմիլեանց և կոռնկեանց՝ յանձնին իւրում բարձեալ մերէր զիաւու երկուց վեհաշուք տանցս այսոցիկ պատրըկաց, այլ ոչ զծիրս պատրըկութեանն անբաժան ունէր նա յընաքաղաց անզմութենէ, որովք բազումք ՚ի դասակցացն զիրուունս օրինաց առ ոտն հարեալք, ճոխացեալ բռնանային յառաջնին՝ ՚ի հասարակաց պաշտամուն, նորիմք յաւար և ՚ի յափշտակութիւնս համարձակ լինելով: Կատոն, որոյ յանմեզկեի խստութենէ բարոյիցն՝ ոչ ոք զերծ ի պարաւանաց գտաւ, քայիկ խելամուտ լեալ բուաց բարուցն Սկիպիոնի, սովոր էր ասել առ մերձաւորս իւր զնըմանէ զշումբերականն զայն, եթէ

«Սա կաց միակ մըտացի.
Այլք համօրէն ըստուելք պին՝
խուսեն, անհետ կորընչին»:

Անդատին ՚ի սկզբանէ ՚ի վերայ եհաս Սկիպիոն եթէ ՚ի զուր էին ամենայն խնակը կատոնի, որովք ճանէր վերածել զմեղկութիւն ժամանակին ՚ի նախկին անդր ժաւմկալութիւն բարուց Հը-

Գրա Ա.

ռովմէական ժողովրդեան. եթէ հարկ էր հնոյ պարսպապատն Հռովմայ ընդարձակել բարոյապէտ, զգետութեան յինքեան բերելով կերպարանս, եթէ պարտ էր յեղափոխել հասարակագով. տութեանն Հռովմայ ՚ի հասարակակացեան տութիւն իտալիոյ, կամ պարզագոյն ևս ասել ըստ այժմեան գալաֆարաց, առաջի կայր զբազաբային վարչութիւնն փոխանակել ազգայնոյ վարչութեան: Վասն որոյ յանձին կալաւ նա կոչիլ Խնամսակալ իտալացւոց, յոր բերէին ամենայն գործը և բանք նորին յայնմօրէ և ապա: Այլ առ ձախող բախտին Հռովմայեցւոց՝ հարկ եղեւ նմա հեռանալ ՚ի Հռովմայ՝ առ ՚ի զուի հանել զիսնդիր առմանն նումանտիայ. զոր իբրև վմարեալ գարծ արար ՚ի Հռովմ, ոչ եգիտ զնս՝ ՚ի վիճակի անդ՝ յոր եթող ՚ի մեկնեն. Ետես զրացմութիւնն խաժամուժ սինկրոր ամբոխին՝ ՚ի յորձնեառանդն բորբոքեալ յուզմունս կրից, և յարիւնագործ գաւաճանութիւնս, յորս մասն կալան և Գրակեանք, որպէս տեսցուք սուզ ինչ ՚ի սասորն: Արհամարհեաց յայնժամ, անսարժան անձին վարկաւ պաշտպան կալ նոցա. Երկեաւ և զիողմն կալաւ աւագորերոյն: Եթողը ընկճել Տիրերի Գրակեայ, և յալընկաս շփոթից Հռովմայ առ եղրարը նորին կայիրոսիւ, յաւուր միում սպանեալ զրտաւ Եմիլիանոս՝ ՚ի տան իւրում, առանց ումեք գիտելց ցայսօր ժամանակի ոյրուոք գաւաճան կենաց նորին կացեալ, երկուց հակառակ կողմանցն զիրերօք շինելով զբարուրս ենելրասն:

Գրակեանք ոչ էին ՚ի Հռովմայեցի պատրիկ տանէ, այլ սերունդը էին եկուեանց. հզօր և հինաւուրց դորով տոհմին խառնեցան ինամութեանմբ ընդ վեհապանծ զարիխն կոռնելեանց, յորոց սերէր առաքիխն մայրին Տիրերեայ և կայիրոսի, որպէս և քոյր վերջնոց այսոյիկ՝ հարսն եղեւ կմիլեոյ Սկիպիոնի: Գերգաստան Գրակեանց զիողմն կալաւ միշտ պատական կարծեաց ընդ գէմ ճգանց պատրըկաց. Հայրն Տիրե-

բեայ և կայի՛ոսի՛ Սեմպրոնիոս Գրակըռու,
կուտակալ գոլով բաժնին Սպանից , 'ի
բնէ Հակառակի կայր խորհրդոց և դիտ-
մանց Ափրիկանոսի Սկիպիոնի , որ միշտ
միտէր 'ի բացարձակ աղնուապետու-
թիւն պատրըկաց , զկերպարան նորին
ոգեսրեալ գոգցես յանձին բերելով .
այլ այսու ամենայնիւ 'ի տրիբունաց
ինքն միայն եկաց ջատագով յորժամ
ամբաստանեցաւ Սկիպիոն , ընտրելով
զփառացն հայրենեաց փրկութիւն քան
զանձին օգուտ սեփական , թետ մա-
հու մեծին Սկիպիոնի՝ հարսնացոյց ին-
քեան Սեմպրոնիոս զգուստոր Ափրիկա-
նոսի , դհամբաւեալն ապա կոռուելիս ,
և լի գովութեամբ փոխեալ յաստեացս ,
եթող 'ի ինամն մօր իւրեանց զերկո-
սին մանկունան զջիբեր և զկայիոս :

Ընդ Ցիբեր և ընդ Կայի՛ոս խահիր ինն
ամաց կայր 'ի միջի . երկոքին եղբարքս
պյառքիկ՝ համազոյգ սրտի և բախտի
վիճակեալք , աննմանք յոյժ գտանէին
իրերաց ըստ բուսոյ բարուցն և ըստ
արտաքին կերպարանացն :

Առաջնոյն էր խառնուած , տեսիլ դի-
մաց , հայեցուածք և շարժուածք և դար-
ձուածք և ձայն և առոգանութեան ե-
ղանակ և իմաստ բանից՝ քաղցր , հա-
ճոյական , չափաւորեալ , միանգամայն
և անդրդուելի . ընդ Հակառակն կայի՛ոս
տհաւոր իմն վսեմութեան երեսոյթ ըն-
ծայէր 'ի կերպարանս զիմացն , 'ի դար-
ձուածմն , 'ի խորհուրդս մտացն և 'ի
խօսսն , անգեղեռուն , եռանգուն և ան-
դիմաղրելի . ճարտասանութեամբ . յոր
և կորով իմն նոր յաւելոյր ըստ բերե-
լոյ կրից ճառելեացն՝ զգնալով 'ի բեմի
և մարմնոյն և ձեռացն շարժմամբք , աղ-
դողագոյն ևս գործելով զասացեալին :
Զափաւորութիւն , հանդարտութիւն ,
ոգի հեղութեան հեռի 'ի բանից նորին
գտանէին . այլ հարկ 'ի վերայ կայ յա-
ւելու 'ի չքմեղս նորին՝ զի առաջի ա-
չաց իւրոց տեսեալ էր զփողխողումն
հարազատին 'ի թշնամեաց անտի , որոց
ընդէմ մաքառել կայր նմա վասն նո-
ցին իրաց :

Որպէս կատոնի և Սկիպիոնի , սոյն-

պէս և Գրակքեանց կէտ նպատակի էր
դարման մատուցանել այնքանոյ եղ-
կութեանց շարեաց , որովք օր ըստ օրէ
երթային և աճէին բազմութիւնք թը-
շուառացիլոց և աղբատաց , և 'ի պա-
կասելոյ աղատ երկրագործաց՝ անա-
պատ մնայր երկիրն , դժնդակ ևս աղի-
տից սովոր զինետ իւր բերելով զլուանդ :
Առ յամբովիկ նպատակի իւրեանց ժա-
մանելոյ 'ոչ ինչ անիրաւ կամ վրդո-
վիլ գործել առին , այլ միայն առաջի
արարին զվերստին հաստատութիւն օ-
րինացն՝ զոր բռնագունին իրաւունք
տուեալ էին թաղել 'ի խորս մոռացու-
թեան՝ 'ի չնորհս մեծատուն աւագա-
նոյն : Անուն Գրակքեանց ոչ կարի ինչ
բարեհամբաւ հոչակեցաւ 'ի դարս ա-
պագայս , առ ՚ի պատճառս ագարա-
կային օրինաց , որում ՚ի պաշտպան
հանդիսացան նոքա . և ապագայն կը-
ցորդ ատելութեան պատրքկաց՝ յա-
փշտակողացն զստացուածս հասարա-
կապետութեան , հաւատաց և ցայսօր
ևս հաւատայ իմն այնպէս ըստ մեծի
մասին զի Գրակքեանց ոչ այլ ինչ էր
ուշ նպատակի , բայց միայն զոր ինչ
հնարին 'ի ձեռս բերել առ մեօք անուա-
նեակըն հանրավարչականք , այն է ջըն-
ջել զիրաւունս սեփականութեան ստա-
ցուածոց , բառնալ 'ի բարեբարոյ մե-
ծատանց զտոհմականացն ճոխութիւն և
զընդարձակ գաշտս , զոր արդար վաս-
տակոց և քրտանց երկամբք ստացեալ
ունին :

Մեծատանց և աւագորերոյն Հոռով-
մայ բռնացեալ էր 'ի վերայ համօրէն
երկրին , որք օրինօք պատերազմաց ան-
ցեալ էին 'ի ստացուածս Հասարակա-
պետութեան , և յորոց իրաւունք էին
իւրաքանչիւր ումեօք հաւասարաշափ
ժառանգել բաժին : Տիբերեայ Գրակ-
քոսի , առ 'ի հայթայթել զոգեպահիկն
պարէն ամբոխին տուայտելոյ 'ի կարի
չքաւորութենէ . յորոց առ կարօտու-
թեան՝ ոչ մարմնոյն ևեթ , այլ և բա-
րոյիցն կայր անհրաժեշտ վտանգ վերա-
հաս , յորմէ և վսաս մեծ աղատութեան ,
նա մանաւանդ գոյութեան ինքնին Հա-

սարակապետութեանն), կամք էին զի բոնացեալըն՝ 'ի վերայ ստացուածոցն հասարակաց, 'ի գուրս տայցեն՝ զորինչ յանիրաւի ունէին, զի բաժանեացի այն հաւասարաշափ առ կարօտեալս, որով և դարման բաւական անհնարին ազգատութեան ժողովրդեան մատուցի: Անքան չափաւորութիւն էր առաջարկութեանն, զի մինչդեռ բազումը 'ի կուսակցացն խնդրէին և տոյժս իմն 'ի վերայ մեծատանցն արկանել՝ որոց յափշտակութեամբն այնու հասարակաց ստացուածոց վնասապարտ գտեալ էր ընդգեմ օրինաց արդարութեան և ընդ երկար 'ի նմին վայելեալ. Տիրերի գուն գործեալ՝ ազատ կացոյց զնոսա 'ի տուգանաց, և ետ սահմանել մանաւանդ զի կրկին չափ գետնոյ թողցի առն իւրաքանչիւր, որոյ իցեն երկու կամ աւելի որդիք, քան զոր շնորհեն նոցա օրէնք ըստ իրաւանց արդարութեան:

Ա.Յ. զրկողացն գաս հզօրագոյն էր 'ի քաղաքորերոյն, ամքոխ յոյժ բազմաթիւ մեծատանց և ազնուականաց և աւագանւոյն. որոց նախս ազմոնկ չփոթից յարուցեալ ընդգեմ առաջարկութեանն Տիրերեայ, այլ տեսեալ զի այնու ոչ կարասցեն զառաշխ ունել հաստատութեան օրինացն ագարակի՝ յատենի ժողովրդեան, փութացեալ գողացան կաշառուկը զկամն և զսիրտ չոկտաւեայ, տրիբունակցին Տիրերեայ, որում մնայի՛ հաստատութեամբ օրինացն այնու ոչ սակաւ ինչ 'ի գուրս տալ 'ի ստացուածոց իւրոց: Խնդրեաց Տիրեր, աղերսեաց թախանձադին ըզ-չոկտաւիոս յետոս կալ յընդդիմութենէ անտի. խոստացաւ նմա 'ի սեփական ընյից իւրոց փոխարինել նմա բովանդակ տուգանացն զոր ունէր կրել անտի. այլ ոչ ինչ տեղի ետ չոկտաւիոս թախանձանաց և յորդորական բաննիցն Արտմանեալ յանժամ Տիրերեայ, առ ՚ի յինքն յանկուցանելոյ և ևս զամբոխ ժողովրդեանն ննջեալ երարձ յօրինացն առաջարկելոց և զաղատութիւնն զայն 'ի տուգանաց զոր շնորհեալ էր յատեալ գորշակակողաց, և ոչ յատենի ժողովրդեան, որպէս սովորն էր:

յաւել տողել 'ի նոյնս՝ զի և գանձք Ա.Յ. տալիայ՝ արքային Պերգամայ՝ բաշխեսցին կարօտելոյ ամբոխին, զի այնու մարթասցին գնել զկարենոր գործիսն 'ի մշակութիւն գաշտացն ժառանգելոց և զներմանս առ ՚ի նոյն պէտութիւն հաճոյ գտաւ ժողովրդեանն, այլ ընդգեմ Տիրերի առաւել քան զառաւել սրեաց զատելութիւն մեծատանց և պատրէկաց: Հոկտաւեալ եա առաւել ևս ընդգիմակաց գըտեալ հաստատութեան վերջնոյ փոփոխութեանն, հարկ եղել Տիրերի ժողովել զամբոխին. որոյ 'ի մի գումարեալ բազմախուռան յոլովութեամբ, ընդգեմ օրինացն և օտար 'ի սովորութենէ, մերկացին զչոկտաւիոս յիշխանութենէ տրիբունութեան. և հաստատեալ օրինացն, ընտրեցան երեք ընծայեալք առ 'ի հսկել 'ի կատարումն նոցին, որը եղեն նախ ինքնին Տիրեր, և ապա եղբայր նորին կայիսոս, որ գտանէր յայնժամ 'ի Սպանիս, և երրորդ՝ Ապավիսոս, աներ Տիրերի:

Ա.Յ. 'ի գործադրութեան անդ օրինացն անհամար դժուարութիւնք ընդ առաջ ելանէին եթէ 'ի ծանրութենէ խնդրոյն և եթէ 'ի գժկամակութենէ հակառակորդացն: Ի տեսանել անդ ժողովրդեան եթէ ոչ արագ արագ 'ի գործ վարին օրինադրեալքն ամենայն, զիւրաքփոփոխ ժողով 'ի բնէ, սկսանէին յետո կալ 'ի սատար լինելոյ տրիբունին իւրեանց. այնպէս զի 'ի կամել Տիրերի առաւել ևս տկարացուցանել զագնուապետութիւնն նորանոր օրինագ՝ որոց էր զզօրութիւն ասպետացն (դապք ճոխից 'ի չոռվմ, որը չէին 'ի պատրիկ տոհմէ) ամփոփել, չկարաց տալ զայն ընդունելի գործել 'ի ժողովի ուրեք, յորում բազմաթիւ էին հակառակորդքիւր քան զժողովրդականն. ոյր վասն ելոյծ զժողովն և սահմանեաց զայլ օրա ՚ի վճարումն խնդրոյն:

Ցետա այսորիկ խմբեցաւ ամբոխն 'ի վճիռ առաջարկութեանն 'ի հրապարակին կապիտուլեայ և ոչ յատենի ժողովրդեան, որպէս սովորն էր:

Խոնճեալ էր բազմութիւնն յամենայն կողմանց, և սկիզբն եղեւ քուէարկութեանն 'ի յոյզս շփոմից և յանհնարին աղմուկս առաջարարակ բազմութեանն : Հրապարակն կապիտոլիսայ, որպէս և է իսկ ցայսօր ժամանակի, անձուկ էր յոյժ . զոր անձկագոյն ևս գործեին փոքրիկ սրբավոյցը և անդրիկ ոչ սակաւք : Բազմամբոխ ժողով նոցածիեալ 'ի զանհազան կրից խառվելոց, ամբոխելոց ալեաց 'ի հողմոյ բերեր զնը-մանութիւն . պղլ ոչինչ նշան կայր 'ի միջի բանութեան իրիք գործոյ 'ի կողմանն նոցին : Անհնարին ճգամքը հազիւ կարացեալ խուն ինչն պատառելով զամբոխն լուկիայ Փլակկեայ, բարեկամին Տիրերի, հասանել մօտ առ տրիբունն, և ազդ առնել նմա զի 'ի մերձակայ տաճարին անուանելոյ բարեկամութիւն (Bonae fides) ժողովեալ ծերակոյտ ատենին՝ սահմանեալ էին զմահ նորատ դանուցանել կամեցեալ Տիրերի առ ժողովուրդն զվտանգն վերահսա մահու, ելանէ 'ի բարձու ուրեք տեղուոյ, թերեւս 'ի սանդղոց անտի տաճարին կապիտոլիսանն Արամազդայ, և ոչ կարացեալ լսելի առնել զիսօսս իւր 'ի խառնաձայն շառաչմանէ ամբոխին, ըղձեռսն 'ի գլուխ իւր տաճի, կամելով իմն այնու յայտ առնել եթէ դաւաճանութիւն կայ գործեալ ընդդէմ կենաց անձինն :

Զայն տեսեալ թշնամեացն գժոխսա-
յին իմ աղաղակ կատաղութեան բար-
ձին . « Ձի ագաւորութեան խնդրէ պը-
սակ » . և զոյին լուր ամքաստանութեան
փութացին առ ժողով ծերակուտին
հաստուցանել :

Ճողով ծերակուտին կանխաւ իսկ ՚ի
մեծի յուզման կայր։ Սկիպիոն Նասի-
կա՝ ՚ի բռնագունից անտի յազնուա-
պետականաց, որոյ էր բազում ինչ կո-
րուսանել ՚ի գործադրութենէ ազարա-
կային օրինաց, քանզի բազմաթիւ անդք
էին նմա ոչ ըստ օրինաց ստացեալ, գո-
ւայր խնդրէր զմոհ Տիբերեայ՝ բռնա-
ւոր գնա կոչելով, և պարտական քա-
րոշէր զբուային հսկել ՚ի ժրկեսթիւն

Հայրենեաց : Բդեաշխն Սկեւոլա , պյո
զգնաբարոյ և ազատ 'ի բռուն թափոյ
կրից , պնդէր զի պատրաստ էր զամե-
նայն ճիգն 'ի վար արկանել՝ առ 'ի զեր-
ծուցանել զչոռվմ 'ի հերծուած պա-
ռակտմանէ հակառակամարտ կողմանց,
այլ չէ ինձ օրէն 'ի մահ տալ զքաղա-
քացի զոր չոռվմայ՝ առանց կանուխ
քննութեան սահմանելոյ յիրաւանց :
Յայնժամ գոշեաց Նասիկա . « Եւ զի
բդեաշխն մատնուո լինի հայրենեաց ,
հապ' ծն մեր փրկեսցուք զայն » : Եւ
զինեալ գաւազանաւ՝ դիմեաց 'ի հրա-
պարակ ժողովյն , զի ետիւր ձգելով ըզ-
բազումն 'ի ծերակոյտ ատենէն և զպատ-
րիկ երիտասարդու , վառեալս հան-
գոյն նմին երկաթեայ ձողիւք և ստուա-
րաբուն գաւազանօք :

Ուամկին՝ ցայն. վայր ժամանակի գեռ
ևս պատկառանզքն զոր առ ծերակոյտն
ունէր, տեղի տուեալ առաջի բուռն
յարձակմանն այնորիիկ՝ հնարի ՚ի փա-
խուստ. և պատրըկաց հարկանելով
տապալերով յոր վայր և ժամանեն՝ մը-
ղեն վանեն զբազմութիւնն զայն ՚ի հրա-
պարակէ կապիտոլիին. ծիրերի ինքնին
մղեալ բռնի ՚ի կուտելոյ ամբոխէն՝ գայ-
թակղեալ անկանի ՚ի գետին. ի վերայ
նորա խուժեն գունդ պատրըկացն մո-
ւելոյ, և հարուածովք գաւազանաց ըզ-
գութի նորին ջախչախեալ՝ սպանանեն
զնա ՚ի տեղւո՞ն յայնմիկ. և զդի նորա
անարգաբար ընդ քարշ ձգեալ ընդ հա-
մօրէն փողոցս քաղաքին՝ արկանեն ՚ի
ծիրերիս գետ: Յայնմ աւուր կոտորե-
ցին արս երեքհարիւր ՚ի կուսակցաց
գրակեեայ, և յարեան նոցին խեղգեալ
լոեցոցին զորէնս ագարակաց:

Ա. Ա. Ուշակ ամեաց գալ հասանելի վագանիոյ վրեժինդիքի արեանն այնմիկ, և արդարութեան օրինացն պաշտպան, Կայիսր Գրակրոս, Եղբայր Տիգրեբեայ,

Յերկուց աստի Գրակեեանց՝ նթէ Տիբերիոն, յինքն յանկուցանէ զսիրտս լառսրերոն, Կայիսոս զնոսին՝ ՚ի զարմանս և ՚ի հիացումն ձգէ: Առաջի իւր տեսանէ Նա զվտանգն՝ յոր արկանէ զանձն իւր խերամուտ է ամենաանիւ դժուարու-

թեան գործոյն՝ զրբ 'ի զուլիս հանել կամի. օրինակ հանդէպ աշաց իւրոց ունի զմահ հարազատին։ Մայր նորա կոռնելիս, որոյ սերունդ՝ գուցէ ոչ կարեր անխառն ունել զնս 'ի գաղափարաց տոհմին՝ յորմէ ծագեալն էր, ջանայր յետո ընկրկել զկայիս 'ի վրէժ. խընդրութեանն խորհրդոյ. այլ ձայն պարտոց առ հայրենիս և արգարութեան պահանջը զլեն զմայրենի յորդորանօթ. զի ոչ առ վրէժխնդրութեան ևեթ հարազատին բորբոքէր 'ի նմա իջձ տալոյ զանձն յայն գործ գժուարին, այլ առ 'ի սէր արգարութեան, որով վառեալ բորբոքեալ բովանդակ՝ իջանէ արիաբար յասպարէզ։

Ի մահու հարազատին քսան և մի ամք ևեթ էին կայեայ, և զկնի հինգ ամաց վերստին բուռն եհար զմարտէն։

Խնդրեաց զիշխանութիւն տրիբունական և կալաւ զայն. և անդէն առաջի արար զի ամենայն իշխանաւոր, որոյ առանց օրինաւոր ինչ պատճառաց տարագիր վանեալ էր զբաղաբացի զըք Հառվմայ, ինքին 'ի գատ կոչեսցի յատենի ժողովրդեան։ Պոպկիլոս' որոյ հալածեալ էր տարապարտ զբարեկամն Տիբերի, անձամք զանձն արար տարագիր առ 'ի զերծանել 'ի հետեանաց վճռոյն այսորիկ։ Յայնժամ առանց ինչ գեղենց կալաւ կայիսու յառաջ վարել զդործն՝ ըստ ոճոյ սահմանելոց 'ի հարազատէն իւրմէ, առաւել ևս ընդարձակելով զայն։ Առ 'ի հաստատութիւն ագարակային օրինաց՝ վճռեաց բաժանել առ կարօտեալ 'ի սահմանելոց 'ի վերայ վաճառուց օտարին, որը առ 'ի զարդ ևեթ և 'ի վայելս համոյից էին ճովից և աւագանոյն զատոց նորանոր բաժինս կալուածաց՝ որոց չէին ստացուածք, և ետ ձեւն արկանել մեծամեծ շինուածոց, կամ կառուցման կամրջաց և ճանապարհաց 'ի Հռովմ և յիտարիա համօրէն, նորիմիք հնարել զկարեորն առ 'ի կեանս ուամիկ որերայն։

Առաջի արար գարձեալ՝ դաշնակցաց ամենեցուն օրէն լինել ստանալ զիրաւուն քազաքակցութեան, և համօրէն իտալական ժողովրդեան ունել մասն 'ի քուէարկութիւն։ Այսու եղանակաւ յինքն զրաւեաց զսիրտս ուամիլին Հռովմայ և զօրաց և համօրէն իտալաւուց, որը թէպէտ և բազմազոյնք էին թուով, այլ կարողութիւն հօրագոյն մնայր 'ի ձեռս թշնամեաց իւրոց. և էր այն՝ ճոփութիւն մեծութեանց։

Այնքան և այնպիսի էր սէր և յարգանք ժողովրդեանն առ կայիսու, զի 'ի սկզբան անդ ոչ ումեք հնար էր համարձակել 'ի թշնամեացն, առանց անշուշտ կորստեան, հակառակել իւկի նմա յայտնապէս. վասն որոյ նորահնար իմն նենդութեամբ վնասել նմա կամեցան, կաշառանօք յինքեանս արկին զտրիբունն լիւսոս Դրուսոս, որպէս ընդդէմ Տիբերի ստացեալ էին զքուեայ հակառակութեանն Հռովտաւեայ. այլ այսու զանազնանդութեամբ զի Դրուսոսի չէր պարտ յայտնապէս ընդդէմ կալ նորհրդոց կայեայ, այլ մանաւանդ ազտական յոյժ քան զնա ցուցանելով զանձն՝ առ մէն մի առաջարկ կայեայ, լիագոյն ևս ազտութիւն յանուն ծերակուտին առաջի առնել ժողովրդեան։ Այսու զեղանակ սամկավարչութեան զինէին ընդդէմ ընկերահաշտ վարչութեան. և յուսային այնու յաշա ժողովրդեանն առատամիտ զանձինս քան զկայիսու ցուցանել, որով հովացուցանել զդիւրաշրջիկ սէր ամբոխին 'ի կայիսէ, միանգամայն և 'ի վնաս բազմաց յոյժ 'ի քաղաքորերոյն ընդարձակելով զօրէնս 'ի խնորհս ևելով խաժամուժ առաջին, յաւելու օր ըստ օրէ զթիւ հակառակողացն ամենայն նորութեանց, այն է զթիւ թշնամեաց կայիսոփ։

Այլ կայեայ առ 'ի զերծանել յայսպիսի իմն առօրինակ մարտէ, օր զվիճակ նորին 'ի մեծ վտանգ արկանէր, խորհեցաւ տեղի տալ առ ժամանակ մի 'ի պաշտամանէ պատուայն, և մնալ բարեգէպ ժամանակի առ 'ի նոյն վերըստին ճեռն արկանելոց, վասն որոյ մեկ-

նեցաւ յԱփրիկէ առ ՚ի կանգնել ըզ-կարքեղոն, յուսալվ զի մինչդեռ ինքն ՚ի բացեայ գտանիցի, յետո կայցէ Դը-րուսոս յառատամիտ ազատականութենէ անտի, զոր ՚ի հեծուկս կայեայ ՚ի գործ վարէր ցայնվայր, որով և ժողովրդեան յայտնի խորհուրդ նենդութեան նորա և բարեկամութեանն ինք. ցի: Այլ ՚ի գերե ելին ակնկալիք նորա. զի հետի կալով ՚ի Հռովմայ զամիսս երիս, ետ ժամանակ թշնամեացն առաւել ևս ուժացուցանելց ՚ի նմանէ զժողովուրդն. այնպէս զի ՚ի դառնալ իւրում անդրէն՝ ետես զբազմութիւնն թօժափեալ օտարացեալ յինքնէ, ըդկուսակիցս իւր նուռազուն անզօր և ընկճեալ, զդաս տուրեառիկ որերոյն ոստի ինքեան յարուցեալ, և զլիպիմոս, զանագորդնն ՚ի թշնամեաց իւրոց՝ ՚ի բարձ բգեշխութեան ամբարձեալ: Հնարցաւ ՚ի ձեռու բերել զտրիրունականն պատիւ, այլ և այն ոչ չնորհեցաւ նմա. զիտաց ետես յայնժամ զանձն մերկ կողովուտ, ՚ի զինուց, և ՚ի թշնամեաց պաշարեալ: Եւ զի պատճառ անշուշտ առ ՚ի գրգուել զիայիսու ՚ի գործ հակառակութեան առաջի մասուսցէ Ռպիմոս, կարգեաց քննել զընթացս գործոց նորա ՚ի չինութեան կարքեղոնի, և վճռեալ հրապարակեաց ջնջել իսպատ զամենայն որչումուն օրինականս, զորս տուեալ էր կայեայ հաստատել յատենի ժողովրդեան:

Ոչ էր հնար այլ ևս յետո կալ ՚ի տալց զանձն յասպարէզ մարտի, յոր մէէին զնա պատրիկք, զդիպող զայն ժամանակ՝ յօգուտ անձանց իւրեանց վարել: իմացեալ գիտաց և ինքնին կոռնելիս, մայր Գրակեանց, եթէ զկենաց կամ զմահու էր այնուհետև խնդիր և զվերջնոյն յորդւոցն. վատութեան ոգուց վարկաւ անհազորդ կալ բախտի որդւոյն, յօյր ՚ի պաշտպանութիւն ետ մուժանել ՚ի Հռովմ գունդ մի իտալաց ցւոց զինելց, ընդ կերդ կերպարանօք հնձնողաց:

Այդուն ժամանելց, յորում հանդերձեալ էր Ռպիմեայ առաջի առնել

զբնաշինջ բարձումն գրակբեան օրինացն, երկորին գլուխք ընդդիմամրտ կուսակցութեանցն, բղեաշխն ինքնին և կայիսու, կանխեալ կալան զհրապարակն կապիտոլեայ, զուղի սպանման Տիրերի:

Զկողմն ունէր կայեայ արիբունն ֆուլուս Փլակկոս, այր ոչ ինչ զգօննամիտ, անառակ բարօյիւք և անպատիւ յաշն ժողովրդեանն:

Ի հասանել անդ Գրակբեայ՝ ճառէր Փուլուսու. և Անտիլլոս ոմն ծառայ ըըզեշխին՝ յանցանել իւրում յանդգնեցաւ թշնամանել զճառախօսն և զորսունին բանից նորա մասուցանէին: ի ցասումն վառեալ կուսակցացն կայեայ՝ յարձակցան ՚ի վերայ նորա և զնա անդէն առ ետեղ թողին զի ցուրտ անկենդան: Խատագոյնս յանդիմանեաց զնոսին կայիսու. վրէժս պահանջէր Ռպիմոս. այլ մրիբի իմն աշեղ յանկարծուստ ՚ի վերայ հասեալ, զառաջն կալաւ մեծագոյն խոռովութեանց յաւուրն յայնմիկ: Այլ գուշակ լինէին ամենայն ոք ՚ի սրտի իւրում եթէ օր գժպատէն հանդերձեալ էր ծագել զցյդ ընդ առաւոտուն: Զգիշերն ողջոյն բանակեալ գաղարեցաւ ժովովուրդն յատենի անդ հրապարակին. իսկ բգեաշխն կացոյց գունդս զօրաց ՚ի կաստորեան տաճարին, յարինելեան կողմն հրապարակին:

Փուլուսու Փլակկոս իւրումն վառելով կալաւ զրուրն Անենտինեան, և ՚ի ծագել տուրինշեան հաս խառնեցաւ և կայիսու ՚ի նսպին:

Խմբեալ էր ատեան ծերակուտին և աւագանին համօրէն ՚ի տաճարի ժողովին. և էին ՚ի մեծի տագնապի: Հրեշտակ առ նոսս հասանէր ՚ի գումարելոց անտի յլլենտին՝ կրսերագոյն որդին Փլակկեայ, զխաղաղութեան բանս առաջի առնելով զայրացելոյ ծերակուտին: Ռպիմիսու գժնդակ իմն դառնութեամբ յետու զարձոյց զնա, ասիրով մի ևս դառնալ այսրէն չև ապստամիրելոցն առանց ինչ պայմանաց անձնատուր լիւալ Այլ առաքեցին զնա վերըստին ինդրել ՚ի ծերակուտէն զիջումն

ինչ չնորհաց : Յայնժամ 'ի բանու արկեալ զնա բգեշխին , հրամայեաց զինու զօրութեամբ ունել զլլ. ենտին , խոստացեալ 'ի կշիռ ոսկոյ փոխարինել որում 'էր մատուցանել նմա զգլուխս Գրակեայ և փուլուիսոփ : Ոչ գունդ հրառվմայեցի առաքեցաւ 'ի յարձակումն յԱւենտին , զի չէին վստահ 'ի հաւատարմութիւն նոցին , այլ աղեղնաւորք կրետացիր : Սակաւաթիւ յոկատն կայեայ անդէն 'ի սկզբան ցիր և ցանեցեն՝ առաջի բուռն յարձակման ոստիին : Գերեալ սպանաւ փուլուիսո զյոդընդ՝ որդւոյն անդրանիկ . յետ յաղթութեանն հատին անզթարար և ըղգլուխ կրսերոյ որդւոյն նորին , զորմէ 'ի վեր անդր զրեցաք :

Ապաւինեցաւ Գրակըսո 'ի տաճարն Անահտայ , և անդանօր խնդրէր գնալ զիւրովի . այլ որոց մերձն կային բարեկամաց 'ի վերայ հասեալ արգելին ըղնա , և յորդորեցին տալ զանձն 'ի փախուստ և պահել զիւրանս իւր 'ի յոյս գրկութեան հայրեննեաց : Են նա գոգցես բանի 'ի տաճարէ անտի , և 'ի ճանապարհին ընդուստեալ ընդ որմն անկատ 'ի գետին և կաղացաւ յոտիցն , մինչեւ չզօրել այլ ևս խաղալ յառաջ , բայց եթէ ընդ քարշ զանձն ածեալ , էանց ընդ կամուրջն Սուրբիկեան , և կորաց մտանել 'ի նուիրական անտառն կատաղեաց , մերձ առ յԱխիկուլն ըըլուր : Այլ գչետ մտելց հալածչացն 'ի վերայ հասեալ 'ի սպանանել զնա , ինքնին հրաման ետ յունազգի գերւոյ իւրում , որ անբաժան կայր 'ի նմանէ , կարճել զնա անդանօր 'ի կենացն : Թըշուառական ուրումնսինքորի բարձեալ յոտոցն զգլուխ նորա 'եկից զայն կապարաւ 'յաւելուլ և ևս 'ի կշիռ ծանրութեանն . իսկ իրան նորա համազոյդ վիճակեալ բախտի հարազատին 'ընկեցաւ յալիս Տիրելի : Ազք երեքհազար մահու մատնեցան յաւուր յայնմիկ 'ի ձեռաց խրուստ յալթականին , և ստացուած ովք կոտորելցն ետ կանգնել Ոպիմիոս զտաճարն Միարանուրեան ... Հեղնութիւն արիւնուշտ :

Յետ մահու որդւոցն երկիցուն 'եկաց 'ի սուր զամենայն առուրս կենացն 'առաքինի մայր նոցին կոռանելիս , որոյ կանգնեցաւ արձան յիշատակի ընդ կամարակապօք Մարկելլեայ , որ յետ ժամանակաց զչոկտաւեայ կալաւ կոչումն , որոյ հրաշալի մնացորդք գրաւեն զգարմանս այցելուաց ցայսօր ժամանակի , 'ի տեղուն անուանեալ Նախսիկին Զկնարան (Pescheria vecchia) .

Կոռանելիս 'ծնունդ էր զարմին կոռնելեանց , աղնուագունին գոգցես քան զամենայն տոհմն պատրըկաց , և պաշտպան աւագանւոյն սկզբանց . այլ հարսնացեալ Սեմպրոնիոսի Գրակեայ 'կապեցաւ բախտ նորին 'ի տոհմն երեւլի արդարէ , այլ միանգամայն և ժողովրդասէր . ոյր վասն և սիրա նորին 'կրեաց ընդ երկար մարտ գմնակ , ծրագեալ յընդդիմամարտ կրցի , կարծեաց , սիրոյ և սկզբանց . այլ հանդերձ այսոքիք ամենայնիւ ոչ երբեք յուրաստեկաց նա ի պարտուց մայրութեան . քանչի 'ի սկզբանէ անդ 'ի կանուխ տիոց մանկանցն ետ զանձն 'ի խնամն կրթութեան նոցին , առանց ուշ ունելցյ այլ ինչ հաճայից 'քան 'ի պարաստել զորդին 'ի գործ մեծ և յօգուտ հայրեննեացն : Համբաւեալ իսկեն առ ամեննեսին դէպք տիկնոցն հոռվմուհւց , որ 'ի ցուցանել անդ իւրում առ կոռնելիս զգարդ ականց պատուականաց , զսկեցինս և զայլ պերճութիւնս ճոխութեան , լոււաւ 'ի նմանէ 'առաջի մատուցանելով զորդիս իւր գրգուել և ասել . «Ահաւասիկ և ականքիմ պատուականք » : Անդստին 'ի նորաբոյս մանկութեան 'նոցին 'փառամիրութիւն տայր նմա գոչել . «Մինչև ցերք ձայնեցեն զիս գուստը Սկիպիոնեանց . երբ ծագեսցի օրն այն յաւուրց յորում կոչեցայց Մայր Գրակեանց » : Ծագեցաւ օրն այն արդարէ , և ըղձակին անուամբ ողջունեաց զնա պատմութիւնն , ողջունեացն զնա այնուիկ և ամենայն գարբ գարուց :

Թերեմս ոչ ըստ ամենայնի կամակից գտաւ ընթացից որդւոցն , զողով 'ի

պատրիկ տանէ : Զկնի մահուանն Տիբե, ըի ճգնեցաւ յընթել զկայիսո՞ի խորհրդոյ վրիժուցն և ՚ի հետոց ընթացից հարազատին, ոչ առ երկիւղի կորըստեան որդւոյն, այլ զի երկմտէր ընդ արդարութիւն իրաւանցն, որում՝ ՚ի պաշտպանութիւն վառեալ էին երկոքին հարազատքն :

Ա. Ա. Եթ մահու կրսերոյն, հասու եղեալ ծանեաւ ըստ ամենայնի զիրաւունս որդւոցն, և փոխանակ անկելոցն՝ զգաղափար մտաց նոցին որդեգրեաց ՚ի սուզ ցաւոց սրախն : Առանձնացաւ յամարաստան իւրում առ Միսենաւ Ծիւ, ոչ ինչ կարի հետի ՚ի Լիտեռնեայ, ուր վախճանեալ էր հաւ նորին Սկիպիոն Ավրիկեցի : Պաուեմէ ոմն արքայ Եգիպտացւոց խնդրեաց ածել զնա ՚ի կնութիւն, այլ նա հրաժարեաց ՚ի փառաց դշխոյաշուքն պսակի, գերագոյն

ընտրելով վառու զոր աղէտք իւր ածէին նմա : Անդսնօր զամն ձիզս վարէր զանդորրութեան կեանս . անդ զային ամենայն արք ականաւորք ՚ի տեսանել զնա և լսել զգեպս կենաց նորին, և զհօր նորին՝ յաղթականին ՚ի Զամա . զգործս և զմահ երկուց արդւոցն, յաղթելոցն ՚ի Հռովմէ Մովոր էր ասել առ այցելուս իւր, « Թոռոնեապք մեծին Սկիպիոնի, օրդիք իմ, արժանիք էին անկանել մահու ՚ի սրբավայրս անդ, ուր յերջանկութիւն ժողովրդեան Հռովմայ ետուն զանձինս իւրեանց » : Եւ առ աշխարողս անզաւակեալ բախ. տի նորին, գոռոզութեամբ իմն տայր պատասխանի . « Ոչ երբեք ըստ արժանւոյն զիտացից շնորհ ունել զբախտէն, զի ետ ինձ պարգևել Հռովմայ զջիրեր և զկայիսո Գրակըեանս » :

Հ. Աթուաս Տիրուեան

Ա. Ն Զ Ի Ն Ք

Ա Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Խ Ս

Կայիսո Գրակըոս
Կոռնելիս
Լ. Ռաֆիմիս բդեաշխ
Լ. Դրուսոս տրիբուն
Մ. Փուլուիսոս

Լիկինիս, կին Կայիսոսի
Փիլոկրատ, ազատագիր Կայեայ
Ծերակոյտք
Տրիբունք, Նուիրակք
Ժողովուրդ, Զինուորք

Տեսարանն է ՚ի Հռովմէական Ատենի ժողովրդեան
և ՚ի գաւթի ապարանիցն Գրակեանց՝ մերձ յԱտեանն :



ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Կ Ա Յ Ի Ո Ս

Հուսկ 'ի Հռովմ եմք արդ , կայէ . խնամեալ 'ի հաշտ գիշերոյ՝
Գրտի մուտս աստ գաղտասոյր . բարձ օն խրախոյս , հայրենիք ,
Զի ընդ քեզ է Գրակրոս : Լուս կայ զինն ամենայն .

Ի խորին քուն թանձրութեան՝ խոնջ ցերեկին վաստակովք ,
Իրանաց շնորհէ հանգիստ աշխատասէր ժողովուրդ :
Լաւորեարքդ և միայն Հովովայեցիք ճշշմարիտ ,
Համեմեալ 'ի վաստակոց՝ հեշտ և անդոյր է ձեզ քուն .

Զոր ոչ խըռովեալ ամբոխէ խայթ խոցոտիչ . . .

Մինչ խորտկաց դեռ 'ի շուայտանս յարբջիռ վայելս անդ պատրիկք .
Անձկալոյ հարազատին խընդամոլիին դաւաճանք .

Կամ զոյեաք գաղտնաշըշոնչ խաւարագէմ 'ի խորհուրդ .

Վատք արանցն այն օն և օն ինձ արդ 'ի մահ գարանեալ ,

Գերութեան Հռովմայ կռանեն շլզթայս , անդէտք բընաւին .

Որքանի ահեղասաստ սատան առ դուրս հասեալ կայ :

Շատ է արդ . ովամբ կոխեն ոտք իմ ըզսեամն հայրենի ,

Այո՛ , իմ են սեամքս . ով մայր , Լիկինիայդ իմ , ով որդեակ ,

Գամ վախճան տալ հեծութեանցդ , և կրեմ յիս ժանտ կատաղեաց

Ոգիս երրակի . զցասութն ընկենեալ հայրենեաց ,

Սէր իմոյըս տոհմայնոց , վրէժխընդրութիւն Հուսկ յետին .

Վրէժ , այո՛ , հարազատիս իմում արեան . օն մատեայց . . .

Այլ աստէն գայ ոք . իցիւ 'ի մերայնոց թէ լինէր :

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈԽԱԼՈՒԽՈՍ ընդ գերւոյ միոյ , եկ ԿԱՅԻՈՍ

Փոշոշիոս

Ի բաց , հաւատարիմ ծառայդ , մերկեա բնաւ զերկիւղ .

Գործ մեծ՝ քաջայանդուգն 'ի զլուխ ածաք արդարե .

ԶՀռովմ թափուր 'ի բրոնաւոր արանց միով արդ թողաք .

Օ՞ն և մեծ քեզ ըստ նըմին 'ազատութեանդ ելցեն վարձք .

Այլ յուշ՝ զի կարեսր կըրէ գաղոնիս զլուխ քոյին .

Մի լիցին քեզ մոռացօնք՝ զի քոյդ ևեթ լրութիւն

Սահմանեալ ունի զպատիւ իմ և զաւուրս կենաց քոյ . . .

Թո՞ղ զիս արդ՝ . . . Ո՞վ պանդոյր, 'ի մահ անձին ընթանայ .
Կարեւոր է զլուխ իւր ինձ, զի կրէ գաղտնիս սոսկալեաց .
Խօլութիւն մեծ լինէր . . . ով մերձենայ . . . դաւ է դաւ . . .
Ո՞վ ես դու, Նըսեմաստուերդ աստէն յածեալ խաւարի՝
Նենդել զայլս . մի ևս յառաջ գար . ով իցես, օն խօսեաց :

կայիսու

Ո՞չ Փուլուեայդ իցէ այս ձայն :

Փուշուիսու

Զի՞ կայ ընդ քեզ և Փուլուեայ
Ո՞ր ժըպիրհ յտնդըգնութեամբ ձայն տաս 'ի մոայլս ըստուերաց
Անձանօթ քաղաքացւոյ :

կայիսու

Ո՞հ, դու ինքն ես, Փուլուիէ .

Գիրկս ինձ ած, ես եմ կայիսու :

Փուշուիսու

Երկինք, կայիսու . դմւ կայիսու :
կայիսու

Այու, լուռ լեր . ես ինքն եմ . . .

Փուշուիսու

Ո՞հ, երանի ինձ, վաշ ինձ . . .

Անձկալիդ յոյժ բարեկամ, և որ 'ի դից բարեգութ
Ածէ արդ այսը ըգեզեզ . կարգեգոնի անդր յափունս
Կարծէի դեռ ևս ըգբէն . և զիարդ դարձ արարեր :

կայիսու

Ի կանգնումն առաքեցայ կարբեգոնի պարըսպաց .
Լըցի արդ ըզհրամանն . յերկուս շըրջանս լոկ լուսնոյ,
Յորս հազիւ զայն բաւեցին բնաշինչ քանդեալ աւերել,
Կարգեգոն նոր 'ի հիմանց իւրոց յարեաւ վերըստին :
Գործ անլուր ցայժմ' արդարև, քան զարովթիւնս այլ նըւազ,
Զոր յեռանդն ածեալ վասէր յոլը բանից քոց զըրոյցք .
Ի ճեպել զիմն այսրէն գարձ, և զօրանալ ոսոխաց
Հակառակ մերոյս կողման, ուժոյ վերջնոյս նըւազել,
Ի վոտանդի կալ օրինաց իմոց, չոտմայ զըլխովին :
Ժիր ըզգործն հապճեպ փութով 'ի զլուխ ածի բովանդակ .
Թողում ըզկարքեգոն, և 'նդ բարկացայտն իսկ Ցիւսէն՝
Ըստահակ հողմովք ալեաց յաւանդի զանձըն տըւեալ,
Զինչ փայլակն յանկարծաթափ սուրհամ աստէն . . . յինչ պայման
Մերս աղէ կայցեն արարք :

Փուշուիսու

Բազմավրտանդ և ձախող .

Սէդն Ռազմիսու՝ յատելեացդ թիւս անագորոյն,

և ի բաց մեկնի գերին :

Բըդեաշխն այն ապիրատ, քաղաքացի վատշըւէր,
Ըզբացեայ լինելդ ՚ի մէնչ յօգուտ բախտին իւր արկեալ,
Համարձակ՝ ՚ի պատերազմն քեզ ընդդէմ խիզախս:
Եւ ՚ի վրէժ նախատանաց, զոր ընկալաւ անդ ուրեմն:
Ի խընդրել իւրում ըզբարձ բըդել լիսութեան, քեւ մերժեալ,
Արդ յայտնի հատուցանել ըզփոխարէնըն ճըգնի.
Առաջի զօրէնըս քո տրիբունականս արկանէ,
Եղծանել զհամայն բնաշխնջ, և առ այս զործ վատշըւէր
Սահմանեալ է օր վաղուի:

Կայիու

Եւ զի՞նչ տրիբունք գործիցեն:

Փուշուիու

Մերկ յայտնի շահավաճառ առնեն ըզտուրբ պարտս իւրեանց.
Գնոյ ետուն զիշխանութիւնն, առ ծերակոյտն ըստայցաւ:

Կայիու

Ո՛վ ժանտք և վատարանց:

Փուշուիու

Դրուսսս ինքնին զլուխ և պետ,

Տրիբունաց գընդին իշխան՝ վատն այն և մեղկ Դըրուսսս,
Յառաջեալ ամենեցունց ՚ի տուրնառ զիւրն էարկ.

Այէք ամենեքին յաւէտ ևս ժանտ կարակումք,

Ըլնորին անդէն յանձինս առեալ բերին զօրինակ:

Այսպէս ագահութիւն ընդ բըռնութեան միաձոյլ

Սոսկալին զեղեռնաւոր զուգատարեալք կրնքեցին

Ցողիս մերձ ազատութեան մերյ ըզդաշըն մատնիշ,

Օրինաց քոց օն և օն, վահ և կենացդ իսկ թերես:

Կայիու

Պանծալիք շահավաճառ՝ ՚ի ճահ հանգոյն սակարկուաց:

Ո՛վ մօրու դու Հոռովմ, որ զլաւսըդ վատթարաց վաճառես,

Ի վաճառ և զինքդ հանցես՝ լոկ թէ գըտցես սակարկու:

Ծերակոյտդ, ատեան երբեմն ատուածախումք գոգ փայլեալ

Գեր զմարդկամբըս խորհըրդոց, տիր այսօր զի՞նչ այլ իցես

Քան զահեղ փառապանձ որջ աւազակաց ... Դողամբ ես:

Փուշուիու

Դողումն և յոսկերս քաղաքացեաց համայն գնայ:

Այլ ՚ի զուր հառաշանօք աստ և ՚ի սուր վատնեսցին

Քաջաղէպ ժամբ առ ՚ի զործ :

Կայիու

Եւ մեք արկցուք զայնս ՚ի գործ,

Այլ կըշուել իցէ արժան նախ զօրութեան մերյ զկար:

Աղէ որշափ բարեկամք, թէ գէպք ետուն արկածից

Բարեկամն երբեք գոտանել, կան գեռ առ մեզ ուխտապահք:

Փորոշիոս

Նըւազունք, այլ քաջազգորք . ինքնին կարբոն անվեհեր
 ի վէճս անդ տգարակաց պաշտօնակից քեղ երբեմն .
 Հոռուբեր և Մուկիոս քաջայանգուցն ուամկավարք,
 Զօրաւորք յիւրաքանչիւր բաժնի . յաւել և զվեկիոս,
 ԶՊոմպոնէ և Լիկինիոս՝ եռանդնազեղք յարութեան,
 Զոյդ հանգետք յազատութիւն . զինչն ինչ չիք հարկ ասել.
 Զայլն ընդ իւր տարաւ համայն յեղահոլով բախտ ղըմնէ .
 Լոկ նըշխարք այս պանծալիք 'ի նաւածուփ բեկմանէդ,
 Որքանի, ո՞հ, բարեկամ, արդ փոփոխմոնք են իրաց .
 Եր երբեմն զի իշխան ամենայնի՝ և զարքայս
 Հըպատակ ակնարկութեանցդ և զժողովուրդս ունէիր .
 Առաջի քո դողայր ծերակուտին սէգ ատեան,
 Զքի պըսակ մեծարանաց քաջաքորեարըն գործէր .
 Էր 'ի մեծ նոցին պարծանս խօսք կամ ակնարկ մի կայեայ,
 Տիկ ժըմիտ մի ևս նորին . նա բարեկամ մըտադիւր,
 Շնորհընկալ և զերի 'իւրաքանչիւր ոք անձկայր
 Կուշլ ժողովըրդեան այդու երջանիկդ աստուածոյ:
 Դու զնոսին 'ի տեսանել ցայն նուաստացեալ քո հանդէպ՝
 Ինքդ ընդ բարսըն վատութեան ամաշէիր, դու ինքնին:
 Ի մուտս հուսկ խոնարհեալ 'ժաւալի բախտ քո պայծառ,
 Կերպարանքն արդ փառաշուք 'ի շամանդաղ խըրթնանան,
 Ի 'ի բագնաց ըստորաքարշ ձըգեալ աստուածս երկրաւոր՝
 Ի փոշոջ՝ համայն արկեալ դընի կործան :

Կոյիիոս

իսկ՝ արդ զի՞նչ .

Բախտ գրժէնէ 'ի խըրատութեանն զդրակըռ չերարձ 'ի Գրակբեայ .
 Է 'ի լանջս իմ սիրտ հանգոյն՝ զի և յարկածս անդ կայտուէ,
 Սիրտ՝ ում քաղցր է զիմամարտ կալ ըզբախտիւն և զըլել
 Ահաւոր գիտա զբախտ՝ լոկ առ մարդոյ վատութեան .
 Վատասիրտ ոք զառաջինն ըզնոյն աստուած դաւանեաց : . . .
 Այլ 'ի թիւս անդ մերայնոց զի զփաննիոս չարկանես :

Փուշուիոս

Զփաննիոս . քեզ թընամի անհընարին է ժանտն այն .
 Արկ ըզժամի 'ի մոռացօնս՝ յոր զձեռանէն քո կալեալ,
 Ի բաց զիպիմիոս մերժեալ, 'ի բարձ ըզդեշխին
 Բարեխօս նըմին կացեր ժողովըրդեանն յատենի .
 Պատմեցի իսկ քեղ յայնժամ զի յապերախտ 'ի սըրտի
 Երախտիս զետեղեցեր :

Կայիիոս

Գոգջիր 'ի սիրտ պատրըկի .
 Վահ, ընաիր բարեկամաց առնել չեղէ միշտ ըզգօն .
 Ոչ բարւոք կալայ զիմմէ սըրտէս զայլոցըն վըճսել,
 Եւ բազուք ուրեք ըզնոյն 'ի մասնըչաց ձեռս ետու .
 Մեղապարտ յայսմ արգարէ ինքնին ես զանձըն դատիմ:
 Այլ ասա ինձ՝ զի՞նչ խորհուրդ կայցէ ուամկին 'ի սըրտի,

Ելիք՝ ի մոռացօնս զաղիտից ցաւս իւր իսպառ .

Ո՞հ , իցէ մեռեալ , պատմեա յայտնի , Գրակբեայն յիշատակ բնաւ մեռեալ իցէ՝ ի նմա :

Փուլուիս

Սիւր քաղցրահեշտ խուսափուկ ,
Որ մերթ յայս շընչէ՝ ի կողմն և մերթ՝ ի յայնըմ կուսէ՝
Է ռամկին սէր . այլ արժան է անբասիր զայն առնել .
Աղիտից իւրոց ծրնունդ գիտա զյանցանըն նորին ,
Զի՞ ստ բազում թըւոյ կարեացն՝ է հարկ լինել եղիութեանցն
Առաւել , յոյժ բազմագոյն . ի թաքնութեան անդ սըրտին
Արդարի սիրէ զքեզ գեռ , և զհեծութեանցն անդագար
Զձայն իւր քեզ հասուցանէ . այլ շըրմտոնք ոչ կըրկնեն զայն .
Լուռ , ահիւ միշտ հառաջեն , և լոկ գիմաց գալիութիւն ,
Եւ զանխուլ շըշունչ անուանդ , խոնարհ բըրբացն ակնարկել
Մատնէ զայնս . զի ոչ սոսկ մի են բըռնաւորք կամ երկուք ,
Այլ որքան՝ ի Հոռովմ պատրիկք գոն , մեծատունք և տրիբունք .
Բարձր՝ ի զլուիս անդ բըռնութիւն պարծ ընթանայ ճոխաճեմ .
Կայ Հըռովմ այրիացեալ յեռանդնազեղ՝ ի տիոց ,
Զի ճակասս առ ջագոսիւ մըզել՝ ընդ իւր Փարիսս
Ած տարաւ զնոսին համայն , լոկ գանարիսն աստ լըքեալ .
Սըրտաթափ առ այս՝ յապուշ հարեալ ոգիք են բոլոր .
Հեծէ ժողովրդեանն ամբոխ նըկուն ահարեկ ,
Քեզ անձկայ , այլ լուռ կայ :

Կայիսու

Եւ ես խօսել տաց նըմա .

Առիւծ զի հանգիցէ՝ Հոռովմէականն է ամրոխ ,
Եւ ձայն իմ զարթուացէ զինքն՝ ի քընոյն . տեսցես քայլ :
Վաղ ուրեմն զամենայն ինչ յախ եդեալ զամ այսրէն .
Նաւագնաց՝ ի Հոռովմ դիմեալ՝ զնանապարհայն՝ ի մըտի
Ըզկըտանգս յեղյեղէ՛ որ հասանել կայցեն ինձ :
Մըրուային զինեն ալիք , Հողմիք մուշէին սաստկաշունչ ,
Երկինք՝ ի փայլակունս հերձնոյր , սարսուէր նաւապետն .
Ես թաղեալ դնէի մտօք՝ ի բազմածուփ նաւուն խորս ,
Զպատմուճանս ածեալ զինեն , կորացոցեալ զաշս՝ ի վայր ,
Ընկլուզեալ՝ ի դըլենդակ ևս՝ ի մրցրիկ ծըփէ՛ :
Զոգուվըս բոլորեալ համայն մարմնոյս զօրութիւնք
Ի խորհուրդ գումարէին , և՝ ի Հոռովմ մըտախոհ՝
Նկատէի յառաջագոյն ըզնենք գաւանս ամհնայն
Զթպիմեայ , զծերակուտին , բարեկամաց , տրիբունաց .
Ա՛խ , ֆուլուիէ , և՝ ի խորհելս քըստմնասարսուռ արտասուռ .
Հեղուփ , այլ արտասուք կատաղութեան էին այնք .
Յառնէի , և զվարարքն ընթանայի շուրջ եկեալ .
Ու՝ նդ հողմոյն մուշէի . զի մոլեզնէր զիս ուժգին
Եղկելի հայրենեաց սէր , հարազատիս ուրուական ,
Որ ըլտասն ամ գեռ՝ ի վրէժ գուռայ , և չիք զայն տարեալ :

Փուղուինս

Տարաւ քաջ :

Կայինս

Աղէ որ այն :

Փուղուինս

Մարթ է գիտել քեզ ըգնոյն :

Կայինս

Եւ զինչ օն :

Փուղուինս

Լուր ինձ ուրեմն Անըզգոյշ, զինչ գործիցես (մեկուսի

Կայինս

Զի՞ լուռ կաս, հիմ ոչ խօսիս :

Փուղուինս

Ներեսջիր. են են երբեք

Մըտերմաց իսկ իւր գաղտնիք :

Կայինս

Քան առ սերտիւ մըտերիմն .

Այլ կացցէ զինչ և իցէն . շուք խորհըրդոցդ արարեալ

Չառնում այլ ևս հարցանել: Դու զկարեռ աղէ զայս

Ի գիտել պատմեա ինձ լոկ. զինչ օն 'ի գէպս յայսոսիկ

Փեսային իմց գնացից Եմիլիանու են օրէնք .

Զինչ արդեզք խորհիցի նա:

Փուղուինս

Եմիլիաննա . . . Ներեսջիր ,

Մէն բանից քոց 'ի դարձուած՝ մի մի հարցուածս արկանս .

Այլ գեռ ևս ըզմօրէդ և ըզհարսնէդ և զորդւոյդ

Ցարդ ինչ ոչ հարցեր, կայէ :

Կայինս

Կալցի զմըտացս իմ չըռովմ

Զուշ խնամոցըս նախկին, առ ընտանիս տաց զերկրորդն :

Զինչ ուրեմն իցէ արժան յԵմիլիանէ ակն ունել.

Փեսայ քեռն իմ . . .

Փուղուինս

Մի փեսայ, այլ ըրոնաւոր զնա կոչեաց :

Կայինս

Գիտեմ քաջ իսկ՝ եթէ ոչ ընդ այնպիսի ամուսնոյ

Խընդայ կինն այն եղկելի :

Փուղուինս

Եւ որպէս խրախ լինիցի

Կին ռամիկ կապեալ 'ի լուծ ընդ ամուսնոյ պատրըկի .

Արդ ատեայ սա ինքն ըզնա, ատեայ և զքեզ զըմսովին :

կայիսու

Այլ և ես . . . սիրեմ զնա ոչ . բայց քաւ զըստոյգն ինձ լըռել .
Փառաշուք նորին համբաւ , հանդէպ գործոցն հոյակապ ,
Որ զանուն նրմա երկրորդ Ավրիլանու մասուցին ,
Ռամկին առ նա զանխուլ և զաշացու մեծարանք ,
Որ ոսխ իւր ծանուցեալ զի՞նքն , այլ պատուէ իսկ այնուիկ ,
Արդարին այս ամենայն տագնապեալ զանձն իմ խոռովէ .
Եւ ընդդէմ թէ յառնիցէ՝ մեզ խոչընդուտն ահաւոր
Ռւնիցիմք առ յաղթութիւն :

Փուլուշիու

Եւ մեք տարցուք յաղթանակ՝
Թէ գքեզ այլ ուստեք երկիւզ ոչ վարանէ . զըստահ լեր :

կայիսու

Բանիցդ 'ի վերայ ոչ կամ :

Փուլուշիու

Պահ մի ես՝ և կայցես :

Այլ 'ի զուր աստէն մեք ժամն առնումք վատնել և ըղիսօս .
Խուն մի լոկ ժամանակեալ այալուայն կայ ծագման ,
Եւ գեռ ոչ ոք դալբստեանդ 'ի մերայնոց է գիտուն ,
Ես ինքնին աւետաւոր սրացայց խրախոյս տալ նոցին :

կայիսու

Անսա , կաց :

Փուլուշիու

Հիմ:

կայիսու

Բացայայտ գործել ըզբանըս քո ինձ :

Փուլուշիու

Լուռ լեր . դրբնդիւն լըսեմ զնացից , և 'ի յարկաց անդ քոյոց
Թըւիմ յունկն ինձ հասանել :

կայիսու

Երկինք իցիւ :

Փուլուշիու

Լուռ լեր օն :

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ԿԱՅԻՈՍ ԵՒ ՓՈՒԼՈՒԻՈՍ մեկուսի , ԿՈՌՆԵԼԻԱ , ԼԻԿԻՆԻԱ զձեռանէ
ունելով գորդոյն , ԵՒ ՓԻԼՈԿՐԱՏՈՍ

կոսնելիա

Սանձ լալեացդ արկ , Լիկինիա , և մի յողբոց քոց 'ի ձայն
Փախըստեան մերում գուշակ հեծեծանքը լինիր .

Ընթացուք զանխուլ, դուստր իմ. Փիլոկրատէ, եկ ընդ մեզ:
Կայիռոս « առ Փուլուիոս »
Ո՞վ ձայն . լուար . է իսկ և է սա մայր իմ:
Փուլուիոս

Մօտ մատիցուք :

Կոռևիելիա « առ ուղևիցան »
Որեար գան . կացջիք , անցից ես յառաջ , ես միայն դէտ .
Կայիռոս
Բարտիսէ սիրտ իմ:

Կոռևիելիա

Եհէ , քաղաքացիքդ . ո՞ք իցէք :
Կայիռոս

Ո՞վ մայր իմ:

Կոռևիելիա

Այր աղէ մայր :
Կայիռոս

Գրակրեայ . այժ , ես ինքն եմ,
Մէ լիթար , ես եմ կայիռոս , ծանիր ըզձայն որդւոյ քո :

Կոռևիելիա

Ո՞հ , դու ես . տեսանէ սիրտ իմ ըզքեզ , քաղցըր որդեակ .
Այլ զիմրդ . . . երբ . . .

Կայիռոս

Զամենայն ինչ գիտասցես . այլ հարսն իմ,
Լիկինիայն իմ ուր իցէ , անուանէիր զինքն այժմիկ ,
Ո՞ւր և նա :

Լիկինիա

Ի գիրկըս քո . քաղցր ինձ հընչումըն ձայնիդ՝
Ընդ հոգիս անց , ըզքաց սիրտ իմ զի մերձ կաս :

Կայիռոս

Ո՞վ ցընծումն :

Լիկինիա

Եւ ըզսա տեսանիցես , նըշմարիցես :

Կայիռոս

Զորդեակն իմ.

Մեծդ աստուածք , զորդեակն իմ . . . 'ի պահու ասո՞ յոր բնութիւն
Հանգը 'ի քուն 'դ արգարութեան , գո՞ւ եղկելի անմեղուկ ,
Դու միայն երերածուփ յածիս 'ի ժանտ խաւարիս ,
Անոք մատնեալ 'ի ձեռըս խուժադուժ տարերաց . . .
Մայր իմ , զինչ զըմնեայ պատճառք հարկեն ըզտուն գրակրեանց՝
Գնալ 'ի մութ թափառաշուրջ . ո՞վ տարագիր վանէ զձեզ :

Կոռնելիա

Դարձիր, Փիլոկտետէ, և սար ՚ի բաց զայս մանուկ։
Ո՞ իցէ այլս այս ընդ քեզ. (Առ Կայիսու մեղմիւ)։

Կայիսու

Է բարեկամ մըտերիմ,

Զամենային մարթի լրսել։

Կոռնելիա

Ոսից պատմել արդ յայտնի
Դասն ըղտան քոյին վիճակ և զմօտալուարն վրաանդ։
Սոսկալի օր, ովք որգեակ, մեղ ծագեացէ արշալոյսու,
Յոր Ատեանս այս՝ լաւուժեանց չքինազ երմեմն տապարէզ,
Խոռվախուժ գարձց՝ ՚ի գաշտ արիւնագործ եղերանց։
Աստ մահու գերապանծ անկաւ եղբալրդ ոդեսպառ։
Սեամք քյոյին են զր կոմիսուդ. իցէ ինձ օն կալ մընալ։
Մինչ գայցէ զնոսին պլզդել մոլի զայրոյիթ պատրըկաց։
Ո՛հ, գուցեն ուրեք երբեք նըւիրտկան ապաւէնք,
Յոր ոչ սըրբապիդք, ռամկին արեան ծարաւի,
Խոռմեսցեն ծիրանազգեաց արգեազ անցագն այն վագերք։
Ո՛վ որդեակ, դու ՚ի բացեայ կայիր, և ես դոզայի.
Բան զինէն, զիտես զի մայր քո զերկիւզ ոչ ճանաչէ.
Ա.Ա. ՚ի գոզ ըզփարելի գրաւուց սիրոց որբազան՝
Վասըն կընօջն այս կամ՝ սըրտիդ և ընդ որդիդ սիրելի,
Զոր ՚ի վրէծ հանդերձեցից՝ թէ մեռանել կայցէ քեզ։
Լուր ինձ արդ. ՚ի զովոզս այսգոյն ոճիր եղերան
Է արդար ոք, որ ՚ի գութ հարեալ ընդ բախտ մեր թըշուառ,
Ինք պատրիկ, այլ ատեայ զդաւագիր նենդ պատրըկաց։
Որ ծանոյց ինձ զայսոսիկ, և ընծայեաց ըզյարկ իւր
Ապաւէն յակաստանի և վայր անքոյիթ յանդորրու։
Առ այս հազենեալ գութով ՚ի իննամըս մութ գիշերոյ
Զսիրեկիս քո զայսոսիկ զիմելի յանձն արարեալ։
Ա.Ա. հասեալ քո ՚ի վերոյ յեղան մըտացս իմ խորհուրդք,
Եւ արդ սիրտ իմ ոչ դոզայ։

Կայիսու

Գոզալ քեզ քաւ, օն և օն.

Զարեան ՚ի սուզ աեսցէ Հըսովմ զերեսս և զորդւոյզ,
Փոխեսցին անդէն մարդկան ևս և իրաց կերպորանք։

Լիկինիա

Է յուսալ ինձ քաջ ընդ այն, այլ թէ իմաց արտաստաց
Յարդ հաւակ կացեր բացեայ, այժմ արհաւրաց ես պատճառ։
Միծ յոյժ յանձն իմ խրախսոյ, այլ և երկիւզ ահարեկ
Արկանէ քոյդ արտ թիւն. զի ոչ խոտան թըշնամիք
Խոչընդուն են քեզ ընդգէմ, այլ ծերակյան և արիւռնք,
Ա.Ա. ահեղ և գըժընդակ յոյժ քան զըլնաւու գու ինքնին։
Լեր ինձ արդ, ըզքեզ երդ մնի առնեմ, լիջիր միշտ ըզգօն,

Լեր ըզգոյլ և խոհական, և քո կենացդ՝ ի խընամն՝
Փարեկի ասեմ՝ որդւոյդ և իմ պաշտպան լեր կենաց :

Կայիռու

Ըսփոփեաց, հարսն իմ քաղցրիկ, և ընդ նըսին բարեբաստ
Հանդարտիւ յանխար՝ ՚ի յոյս՝ ցածը զաղմնւկըս սըրտիդ.
Թող կանանց զարհաւիրսդ զայդ իմոց թըշնոմեաց:
Այլ ով, մայր, խնամակալս այս բարեգութ՝ տան իմոց,
Ո՝ պատրիկս առաքինի:

Կոռնելիա

Ոներդ, որդին Եմիլեայ:

Կայիռու

Թըշնամին իմ:

Կոռնելիա

Որ երախտիս գործէ՝ նա չէ թըշնամի:

Կայիռու

Ե իսկ է ինձ, և ՚ի դառն անհընարին անարգանս՝
Զոսոխին առ իս ձեռաց զրեցից յաւէժ զերախտիս.
Յորմէ զիս ատեայն՝ ինձ հեշտ ընդունել մահ քան ըզկեանս:
Եւ թէ ոչ իսկ այնպիսի, այլ աւագաց պաշտելի,
Ե գոռող արհամարհոտ ժողովը ըրգեան, շատ ինձ այս:

Կոռնելիա

Ընդ վայր նախատակոծ ըզլաւութիւն հարկանես:

Կայիռու

Զիք լաւ՝ ուստ տարագիր ժողովը ըրգեան կայցէ սէր:
Լուս լեր ճն. ցասումըն բանք քոյին յոգիս իմ վառեն:

Կոռնելիա

Զայս նախկին նըւագ որդւոյս՝ բանք իմ դառինք գըտանին . . .
Թապաշաւ սըրտիդ՝ ներեալ անմեծարու քո խօսից:

Կայիռու

Ո՛վ մայր իմ:

Փոշուշիռու

Ոչ ևս այլ հանդարտեալ ժոյժ ունիցիմ.
Ցանխորհուրդս, ով կին դու, հնարիս պոնել անբասիր
Չոյր շըրթանցըդ ոչ ՚ի ճահ թըւի ներբող գովեստից,
Արդարի առն հոյակապ, այլ բըռնաւոր գըլխովին:
Յնչ զու զկեանս ապաստան զնայիր առնել զԴըրակբեանց,
Ե Սկիափին դք. աղէ ոչ և ՚ի մից յորդւոց քոց՝
Սկիափին ոմն որբացոյց ըզեղ ՚ի քաղցը արեէ:
Ո՛վ սերունդ Սկիափիննեանց, տոհմն գոռող, բեղնաւոր
Ի ծընունդս համբաւատենչ և բըռնաւոր որերոյ . . .
Իսկ քեզ, կոռնելիա, է պաշտելի ժողովուրդն . . .
Պանծալիթ շառաւիդ՝ ծագեալ յայսգոյն ՚ի զարմէ:

կոռնելիա

Ո՞վ յանգուզնըս այս, կայէ:

Փուշուիոս

Զհանդէս բանիցս անաշառ՝

կոչեա զի՞նչ քեզ կամք իցեն. ես եմ Մարկոս Փուլուիոս:

Կոռնելիա

Դու Փուլուիոս, և Ժըպրիցիցն ձայն բառնալ իմ առաջի.

Ծն ե օն, ոչ գիտիցես թէ համրանալ հարկ իցէ

Համայն առն ապիրատի՛ առաջի մօր Գըրակբեանց. —

Ու բարւաք, կայէ, ընտիր բորեկամաց քոց առնես,

Եւ զանուանդ համբաւոյ կարի սակաւ ունիս խնամ.

Գիտա քեռ քոյին սա ինքն համեստութեան կայ սատան,

Եւ առ այս կարճեաց աներդ ըզդորին զոտսն 'ի տանէն.

Առ այս եռանգեանն ըսպանալեաց բանքն անմիտ,

Առ այս և այժմ սատէն անմըտադոյն իւր բասրանք. . .

Ո՞հ, զի՞նդ քեզ և ընդ ժանտ ոք այսպիսի կայ, որգեակ.

Զի՞նչ Գրակբեայդ ընդ Փուլուեայ:

Փուշուիոս

Գիմնիք, քանի անարդանք . . .

Կոռնելիա

Քեզ 'ի կը ու:

Փուշուիոս

Եւ ովք եա յիմ վերայ քեզ զայդ իրաւունս:

Կոռնելիա

Դնացք վարուցըդ քոյին, և նեղերունքդ իսկ թերես:

Փուշուիոս

Եղերունք իմ համօրէն, կին գու, երկուք են միայն.

Առ գոռողս ատելութիւն, ազատութեան սէր անշափ:

Կոռնելիա

Հիմ ձայնես զազատութիւն, ընդ ում խօսիս զայնմանէ.

Սոսկ յամօթոյ, մերկ յուղութեանց, և զանձդ ազատ կոչիցես:

Աէր ազատութեան, բազաք գարուց հինաւուր

Բնաւ ոմիր եղերանց, ցըրել զօրէնս անպատկառ,

Ամենայն ուրիք վառել ըզկուսակցաց հուր զայրոյթ,

Զաննըմանարն ձեզ նեղել բիւր գըժընդակ բասրանք,

Դարան գործել կենաց, ըստացուածոց, համբաւոյ,

Ի շըմթայս գերել ըզբանս և ըզխորհուրդս իսկ մըտաց.

Եւ այսպէս թամթաեաք 'ի գարշութիւնս ազոնքիս,

Ցառնել ազատութեան, սիրոյ եղբարց կալ քարոզ,

Ըզհամեստ քաղաքացւոյ շորթել յանձին ըզպատիւ,

Ի շըրթունս ցանդ հայրենիք, այլ քան երբեք 'ի սըրտի.

Աւասիկ աղատութիւնն այն գերապանծ և վըսեմ,
Սըրբազան քեզ և առ քո նըմանիս, քաւ Գըրակեանց .
Աղատութիւն աւազակաց, գողոց . . . ընդ իս եկ, որդեակ :

SԵՍԻԼ ԶՈՐՌՈՐԴ

ԿԱՅԻՈՍ ԵՒ ՓՈՒԼՈՒԻՈՍ

Փուլուիոս

Լըւա՞ր . . . մհ, և կալայց ժոյժ այսքան դառըն խօսից . . .
Եւ կալցիս հաւատարիմ շըրթանց նորին դու զբարբառ :
Կայիոս

Շուք դիր մօր իմում, և քաջ կըշուեալ դիջիր 'ի մըտի'
Անբասիր քեզ ցուցանել իմանաս, զանձդ անբասիր :

SԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՓՈՒԼՈՒԻՈՍ

Ե՞ս զանձն իմ անբասիր. թէ ով իցեմ գիտիցես . . .
Ե՛րթ, անմիտ գու . 'ի ծագել արեգական նըշուլից՝
Զարդիւնըս ծանիցես ձեռացս իմոց այսոցիկ . . .
Եւ քեզ հարկ՝ գովել զայն, լուռ կալ, կամ ընդ իս մեռանել :

Երկրորդ Հանդէսն յասաչիկայս :

ԹԱՐԴՄ. Հ. ԱԹԱՅԱՆ ՏԻՐՈՅԵԱՆ

